

Վկայաբանութիւնը Սրբոց, Ա. 50)»<sup>1</sup>։ Յարգելի սրբազանը անշուշտ տարբեր պատճառի կը վերագրէ այս վիշապասպանութիւնները : « Բոլոր գազաններէն օձը միայն չէ մոռցած իր թշնամութիւնը, առաջին մարդասպանը, ինչպէս կը կոչուի ան : Երբեք չընտելացաւ որ և է սուրբի հետ, և հասկնալի է թէ որ և է սուրբ պիտի չուզէր շոյել այդ թունաւոր թրշնամին, որուն վրայ կը տանին իրենց բռնի յաղթանակը Զինուորական կամ Զիւսուր Սուրբերը, (Գէորգ, Մինաս, Թէոդորոս, Սարգիս, եւն.) իրենց նիզակին ծայրովը գետնին գամելով զայն. մինչ ուրիշ սուրբեր ալ խաչակնքումով, ազօթքով կամ բերնի փչումով կը փճացնեն հասարակաց վտանգ սպառնացող եղեռնաւոր այդ գազանը : Մեկնութեան չեն կարօտիր այս սպանութեան զիրար յիշեցնող պարագաները, վասն զի Սատանը ոտնակոխ ընելու խորհրդանշական դրուագներ էին անոնց Վարդ Սրբոցներու մէջ ընդհելուզումը »<sup>2</sup> : Նախ խնդրոյ նիւթը օձէն աւելի վիշապն է, թեւաւոր : Իսկ դժուար պիտի կարենան բացատրել թէ ինչո՞ւ միայն Այր և քաջ պատերազմող սուրբեր Վիշապաքաղ կամ օձ սպանող են նկատուած և ներկայացուած<sup>3</sup> : Ըստ իս տօրը պատճառը Սեմական ծագմամբ միաստուածութիւնը (մարդաստուածութիւնը) իր Քրիստոնէութեամբ, և Արիականութեան հին ազդեցութիւնն է, որուն ենթակայ ենք և Հայերս<sup>4</sup> :

Վիշապասպանութեան չարայաղթ գործով զբաղեցաւ հայ Քրիստոնէութիւնը որքան որ միջոցները կը ներէին, թէեւ երբեմն նոյն այդ եկեղեցւոյն շատ կարկառուն դէմքերը շեղած են ընդհանուր կանոնէն. օրինակ, Գրիգորիս Աղթամարցի կը գրէ ինքն իր կողմէն.

« Յաւձէն շատ զըրուց գիտեմ բայց չկարեմ զըրել հաւասար. Աւձն է իմաստուն խելօք հրամայեց տէրըն կենարար. Աւձն է վիշապի ծընունդ սողմոն զըրեց ի հանճար.

Աւձս որ ի ծըւէն ելաւ, նա կոխեց գերկիր հաւասար » :

Ինչպէս ըսի, Աղթամարցին իր կողմէն կ'աւելցնէր այս տողերը պարզապէս, որովհետեւ այս հեղինակը աւելի հայ ժողովրդական բանաստեղծ էր, աշուղ էր, քան թէ քրիստոնէական խորիմաստ վարդապետ, որով ենթարկուած էր աւելի հայ աւանդութեանց : Հայ աշխարհիկ արուեստները, որոնցմէ էր հիւսուած եղէնը իր մեծագոյն մասով և գորգաշինութիւնը, ազատ մնացին այդ ճնշումէն, որով բաղդատմամբ մնացին անաղարտ :

Արդ անգամ մը որ նկատի առնենք այս տեսակէտը, դիւրաւ կարելի է պատասխանել Mr. Popeի մէկ ուրիշ դիտողութեան. ան կ'ըսէ. « Եթէ այդ վիշապ գորգերը իրապէս հայկական են ինչո՞ւ չենք կըրնար գտնել անոնց զծագրածներէն կամ գոնէ կապակցութիւն մը ուրիշ տարբեր զարգային գեղարուեստներու մէջ որոնք գիտենք թէ հայկական են : Ոչինչ կայ ճարտարապետական զարգերուն մէջ, ոչ ալ հայկական տարբեր հիւսուած եղէններու կամ նկարներու մէջ, որ ցոյց տայ որ եւ է ուղիղ յարաբերութիւն վիշապ գորգերու նկարազրական զծագրութեանց հետ, և եթէ որ և է մէկը գտած է մանրանկարներ, գրքերու ծաղկումներ որոնք կը կրեն նմանօրինակ զարգային ոճեր, պէտք է որ հրատարակուին »<sup>5</sup> : Առաջին ակնարկով իրաւացի կ'երեւայ դիտողու-

1. Սուրբերն ու Անասունները. - Ե. Ե. Գ. - Սիոն. Երուսաղէմ, 1928, էջ 152.  
 2. Անդ, էջ 149.  
 3. Կարծես Վահագնի և Հերակլէսի հետեւողութեամբ.  
 4. Այսու հանդերձ Անահտայ մայրապաշտ գաւակներս շարունակեցինք քրիստոնէութենէ վերջ ունենալ Աստուածամոր հանդէպ այնպիսի խոր և աստուածային պաշտամունք՝ որպիսին չունի ոչ մէկ քրիստոնէայ ազգ. Ասոր իբր փաստ անհաստատ սուեալներ ունինք. նոյնիսկ իբր թէ Բարդուղիմէոս Տիրամօր պատկերը տեսած է ի հայս : « Անահտա և Աստուածածին ի հայս » կարեւոր և հետաքրքրական ուսումնասիրական նիւթ կը կազմէ.  
 5. « Հայկական վիշապ գորգերու ստասպելը » Թրգմ. անգլ. իմս, « Բագմավէպ » 1930. Թիւ 10.